ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՑ ՔՐՈՆԻԿ

„ՎԱՐԺՈՒՀԻ"

ԿՈՄԵԴԻԱ ԵՐԵՔ ԱՐԱՐԻԱԾՈՎ

Գէորգ Զմշկեանի

Ապրիլի 5-ին, Աղնւականների կալւածական բանկի թատրոնում, կայացաւ պ. Գէորգ Զմշկեանի «Վարժուհի» կոմեդիայի առաջին ներկայացումը։

Պարոն Զմշկեանը ընդհանրութեանը արդէն վաղուց է յայտնի իւր բազմակողմանի գործունէութիւնով վերաբերեալ հայկական թատրոնին։ Նա դերասան է, այդ մէկ. նա թատրոնական գործիչ է, այդ երկրորդ. նա թատրոնական թարգմանիչ է, այդ երրորդ. նա թատրոնական քրոնիկեօր է, այդ չորրորդ. այժմ նորա տիտղոսների վերայ աւելացաւ նաև մի հինգերորդը՝ պ. Զմշկեանը իբր թատրոնական հեղինակ։

Իսկապէս ես այստեղ մի ժամանակագրական սխալ եմ գործում. պ. Զմշկեանից իրանից եմ լսած, թէ նա տարիներ առաջ գրել է և բեմի վերայ դրել, անդամ երեք անգամ կրկնել «Մախլաս» անունով մի գրածք, էլ չը գիտեմ՝ կոմեդիա, թէ վոդեվիլ, թէ ֆարս։ Բայց դորանով արդէն բաւական է ասւած, որ հասարակութեան աչքում պ. Զմշկեանի դեբիւտը, իբր թատրոնական հեղինակի, իսկապէս սկսւում է նորա «Վարժուհի» ներկայացումով։

Հարուստի որդի Ազիզեանցը, վերադառնալով իւր հայրենի քաղաքը՝ Թիֆլիս, սիրահարւում է Նունէ անունով մի վարժուհու վերայ։ Վերջինս նոյնքան էլ սիրում է Ազիզեանցին։ Ազիզեանցը տեղական նախապաշարումներից զուրկ մի երիտասարդ է, որը ամուսնութեան մէջ չի թագցնում կողմնակի նպատակներ։ Նա սիրում է Նունէին, և հէնց այդ պատճառով կամենում է Նունէին իւր կին ունենալ։ Նա ինքը գալով Թիֆլիս, հայոց դպրոցներից մէկում ընդունում է ֆիզիքայի դասեր և մտնում

հայկական շրջանը։ Նունէն չքաւոր ընտանիքի որդի է, ունի դուրեկան արտաքին, իսկ իւր ներքին յատկութիւններով նա աչքի է ընկնում, որպէս ազնիւ ճաշակի ու զգացմունքների տէր աղջիկ, ընդունակ սիրելու և արժանի սիրելու, ընդունակ անձնուիրութեան, բաց և խելօք, իրան զսպելու ընդունակ աղջիկ։

Բաց ահա դժուարութիւնը. Ազիզեանցի մայրը (հայրը վախճանուած էր) միշտ մտածում է եղել, թէ իւր որդին, ուսումը աւարտելուց յետոյ, կը գայ Թիֆլիս և կը լինի կամ մի բարձր աստիճանաւոր, կամ մի հարուստ վաճառական։ Բնական է նորա զարմանքը, երբ իմանում է և տեսնում, թէ իւր որդին կատակ չի անում մտնելով հայկական շրջանները և ուզում է առաջարկութիւն անել վարժուհի Նունէին։ Մայրը աշխատում է արգելել այդ ամուսնութիւնը։ Ճանաչելով Նունէին իբր մի աղջիկ, որը գիտէ հանգամանքները կշռել, Ազիզեանցի մայրը առանձին խօսակցութիւն է ունենում Նունէի հետ, որին յայտնում է, թէ իբր այդ ամուսնութիւնով կը դժբաղդանայ իւր սիրածի քոյրը, որը դեռ ես մարդու տալու աղջիկ է և որը բարձի թողի արած կը լինի, եթէ իրանց ընտանիքի միակ նեցուկը, որդին՝ ամուսնանայ ում հետ և իցէ։ Բայց Նունէն շատ լաւ հասկանում է, որ Ազիզեանցի մայրը իսկապէս ուզում է խանդարել և ոչ թէ լետաձգել իւր որդու ամուսնութիւնը մի հայ վարժուհու հետ, այն որդու, որի հարսնացուն, Ազիզեանցի մօր սպասածին համեմատ, պէտք է լինէր մի հարուստի և բարձր դիրք ունեցողի աղջիկ և ոչ թէ մի տնանկ աղջիկ և այն էլ՝ մի հայ վարժուհի։ Նունէն, ոչ առանց հեղնութեան Ազիզեանցի մօր պատճառաբանութեան վերայ, Ազիզեանցի մօրը հանդստացնում է, խօսք տալով չ'ընդունել նորա որդու առաջարկութիւնը։

Ինչու Նունէն այդ խոստմունքը տալիս է և իւր խօսքի վերայ մնում։

Նունէն նմանապէս ունի մայր—Եփեմիա, որը նոյն կերպ է մտածում, ինչպէս և իւր աղջիկը։ Նունէն արդէն տեսնում է, որ ինքը, ամուսնանալով երիտասարդ Ազիզեանցի հետ, պէտք է Ազիզեանցի տանը երկպառակութեան պատճառ դառնայ։ Ազիզեանցի ընտանիքում Նունէն պէտք է նկատուած լինի իբր մի բարերարուած աղջիկ. նորա վերայ, հակառակ իւր մարդու կամքին, Ազիզեանցի տանը պէտք է բարձրից նայեն։ Նունէի մայրը Ազիզեանցի ընտանիքում պէտք է ընդունուի ոչ որպէս մի սիրուած հարսի մայր, այլ իբր մի չքաւոր կնիկ։ Իսկ Նունէի մայրը հպարտ է չքաւորութեան մէջ, որպէս և Նունէն ինքը։ Այդ բոլորը գուշակել են տալիս, որ Նունէն իրան չը պիտի բաղդաւոր զդայ Ազիզեանցի ընտանիքի և նորա սովորական հասարակութեան մէջ։ Բայց երիտասարդ Ազիզեանցը պատրաստ է բաժանուել մօրից, առանձին ապրել իւր սիրած կնոջ հետ, անգամ հետեւել Նունէին, եթէ սա կամենայ վարժուհի մնալ և գնալ մի ուրիշ քաղաք։ Նունէն այդ լսում է իւր սիրածի բերանից, բայց դորանից այս եզրակացութիւնն է դուրս բերում, որ նաև

այն դէպքում, երբ Ազիզեանցը չ'ընկճուի իւր մօր և շրջապատողների կամքի տակ և ուրեմն չանձն առնի կռիւը իւր ընտանիքի դէմ. նա ստիպուած կը լինի հէնց առաջին քայլից՝ մօրից բաժանուել ու քանքաղաղացնել մօրը, քրոջը և այլն։ Հասարակաց կարծիքը կը մեղադրէ Նունէին, ասելով, որ հարսը բաժանեց որդուն՝ մօրից, քոյրերից, ազգականներից։

Ազիզեանցը անում է իւր փայփայած առաջարկութիւնը և Նունէից ստանում մերժում։ Վերջինս իւր մօր հետ հեռանում է Ղզլար, որտեղից Նունէն վարժուհութեան հրաւէր է ստանում։ «Թող ֆորոխ խուրը և ֆոմանոնը ի'անէ իւ անէիւը», ասում է Նունէն և հեռանում։

Ահա պ. Զմչկեանի պիեսի թեզը։ Բայց պիեսի մէջ կան նաև մի քանի ուրիշ գործող անձեր։ Այդ երկրորդակարգ գործողներից նշանաւորագոյններն են՝ օր. Սաթենիկ և Գէորգ, մէկը վարժուհի միւսը վարժապետ։ Սաթենիկը, Նունէի ընկերուհին և մտերիմը, սիրում է Գէորգին, իսկ Գէորգը այդ բանից ոչինչ չը գիտէ և սիրում է Նունէին։ Այնպէս որ Նունէին սիրում են և՝ Ազիզեանցը և՝ Գէորգը, մինչդեռ Նունէն սիրում է միայն Ազիզեանցին, իսկ Գէորգի հետ վարւում է որպէս եղբօր հետ, լարգելով նորա անձնաւորութիւնը։ Գէորգը լոլը չի կորում, ճանաչելով Նունէի կամքի հաստատութիւնը և հարստութեան համար ունեցած արհամարհանքը. Գէորգը շարունակ կարծում է, որ Ազիզեանցը մի վիշացած տղայ է հէնց որովհետև Թիֆլիսի հարուստ ընտանիքիցն է։ Նունէն, լալանելով իսկութիւնը Գէորգին, որը վհատութեան մէջն է ընկնում, մատնանիշ է լինում Սաթենիկի վերայ, իբր՝ սիրելու արժանի աղջկայ վերայ, որին միայն պէտք է մի փոքր ուսումնասիրել՝ նորա հոգեկան արժանաւորութիւնները գնահատելու համար։ Սաթենիկն էր, որին Գէորգը լանձնարարեց հաղորդել Նունէին իւր սիրոյ մասին, իսկ այժմ Նունէն է, որ հաղորդում է Գէորգին Սաթենիկի սիրոյ մասին։—Անձնաւորութիւններից մէկն է, վերջապէս, Ազիզեանցի մօր՝ Եփեմիայի եղբայր Միմոսեանցը, որը, սակայն, միմոսութիւնով չի զբաղուած։ Պիեսի մէջ նա երկու անգամ է երեւում՝ մի անգամ օր. Սաթենիկին հրաւիրելու իւր որդկերանցը հայոց լեզուի դասեր տալու համար, իսկ երկրորդ անգամ նա ներկայանում է Նունէի մօր՝ Մարթայի մօտ, իւր քրոջ կողմից խնդրելու, որ նա, Մարթան, համոզի իւր աղջիկ Նունէին՝ հրաժարուել երիտասարդ Ազիզեանցի առաջարկութիւնից։ Բանը սորանումն է, որ Եփեմիան իրան խաբուած էր կարծում Նունէից, որից խօսք էր առել՝ իւր որդի Ազիզեանցի առաջարկութիւնը չ'ընդունել և չտապել էր իւր եղբայր Միմոսեանցին Նունէի մօր Մարթայի մօտ ուղարկելու և խնդրելու, լանուն իրանց ընտանիքի բարոյութեան, համոզելու, որ նա իւր աղջիկ Նունէին լետ կանգնացնի Ազիզեանցի հետ ամուսնանալու մտադրութիւնից։ Բայց դա՝ թիւրիմացութիւն էր Ազիզեանցի մօր կողմից. Նունէն արդէն մերժել էր Ազիզեանցի առաջարկութիւնը, թէև այդ բանից դեռ ևս տեղեակ չէր Նունէի մայր Մար-

թան։ Մարթայի համար դա մի լաւ առիթ էր ցոյց տալու Ազիզեանցի մօրը, որ սա չը կարծէ թէ Նունէն և ինքը չլացել են Ազիզեանների հարստութեան վերայ և որ Նունէն այնքան խելօք է, որ կարօտութիւն չի զգալ մի այդպիսի խնդրի մէջ դժուարանալ և հարկաւոր դիրքը բռնել, նաև առանց իւր մօր խորհուրդի։

Գ. Զմշկեանի «Վարժուհին», որպէս տեսնում է ընթերցողը, Բաւականին կենդանի բովանդակութիւն ունի։ Եւ հէնց այդ պատճառով նա յաջողւեց, որպէս բեմական գրուածք։ «Վարժուհին» ըստ ամենայնի բեմական է։ Այդ իսկ յատկութեան համար «Վարժուհին», որպէս ես կարծում եմ, կը մնայ հայական րեպերտուարի մէջ դեռ ևս մի քանի տարիներ։ Տիպերը—բնական են։ Հայ վարժուհու տիպարը վերցրած է կեանքից. Ազիզեանցը, որը հարուստ ընտանիքից լինելով, հայ դպրոցներում դասեր է տալիս և մտնում հայկական կեանքը,—եթէ սովորական երևոյթ չէ, գոնէ իրականութեան դէմ չի մեղանչում։ Ազիզեանցից առաջ շատերն են նոյնը արել Թիֆլիսում։ Որ Ազիզեանցը յափշտակւում է մի վարժուհով և առհասարակ մի անօժիտ աղջիկով—եթէ Թիֆլիսում դա մի կանոն չէ, բայց և անբնական չէ։ Ազիզեանցի մայրը—կեանքն է որ կայ։ Նունէի մայրը—թէև իդէալացրած է, բայց անբնական չէ։ Նոյնը կարելի է ասել և ուրիշների մասին։

Մի խօսքով «Վարժուհին» իբր մի կոմեդիա Թիֆլիսի կեանքից, հիմնւած է իրականութեան վերայ. տիպերը կամ սովորական են կամ բնական։

Բայց ահա մի հանգամանք։ «Վարժուհի» գրուածքում «Սէրը չի ողորմում» Ազիզեանցի և Նունէի սէրը փոխադարձ է և բնական։ Ինչու այդ սէրը չը պէտք է ամուսնութեան հասցնէր։ Հեղինակը այդ սիրոյ դիմաց դնում է Ազիզեանցի մօր պահանջը։ Ճիշդ է, այդ մայրը կ'ուզէր իւր որդու համար մի հարսնացու մեծ ու հարուստ տնից. բայց որ մի տգէտ ու նախապաշարւած մօր պահանջը պէտք է աւելի նշանակութիւն ունենար, քան թէ երկու սիրահարւածների ձգտումը—ահա թէ ինչն է դժւար հասկանալը։ Մայրը այնպէս, ինչպէս ներկայացւած է պիեսի մէջ, մի անընդդիմադրելի ոյժ չէ դուրս բերւած. իրաւապէս և նիւթապէս այդ մայրը չի կարող խանգարել իւր որդու ամուսնութիւնը Նունէի հետ։ Մայրը կարող էր միայն բարոյապէս ազդել։ Արդ, հէնց այդ բարոյական կողմումն է, որ մայրը մեղանչում է։ Եթէ Նունէն սիրում է երիտասարդ Ազիզեանցին և այնքան խելօք, որ հասկանում է Ազիզեանցի մօր ձգտումները, նա, այդ Նունէն, շատ լաւ պէտք է հասկանար, որ Եփեմիան կը հասցնի իւր որդուն բարոյական անկման և դժբաղդ ամուսնութեան։ Մի՞թէ Նունէի պէս սիրող սիրտը և խելօք աղջիկը կարող էր դժբաղդութիւն

համարել անհամաձայնութիւնը մօր և որդու մէջ, երբ նա, նոյն Նունէն, շատ լաւ գիտէ, որ երիտասարդ Ազիզեանցը, տեսնելով իւր մօր տգէտ և վատ ձգտումները, պէտք է չարունակ կռուէր իւր մօր դէմ և կամ, ընկճուելով այդ մօր կամքի տակ, ստիպուած պէտք է ամուսնանար մի չը սիրած և դեռ ով գիտէ ինչ թեթևսոլիկ կամ տգէտ աղջկայ հետ և դժբաղդանալ, կամ չարունակ կռուելով իւր կնոջ դէմ կամ մեռցնելով իւր մէջ բոլոր մաքուր զգացումները և լաւ ձգտումները։

Ի զուր է հեղինակը դրել Նունէի բերանում այսպիսի մարգարէական խօսք՝ «Թող փարատուի խաւարը և ժամանակը կ՚անէ իւր անելիքը»։ Եւ ինչպէս կարող է փարատուել այդ խաւարը, քանի որ դուք կը սպանէք սէրը յանուն նոյն խաւարի։ Դուք բաց էք թողնում մի հիանալի դէպք՝ լոյս մտցնել խաւար ընտանիքի մէջ Նունէի միջոցով և ձեռքներդ ծալած սպասում, որ այդ խաւարը փարատուի, քանի որ, սպանելով Ազիզեանցին, դուք աւելի ևս թանձրացնում էք այդ խաւարը?!

Որ Նունէն կարող էր այնպէս վարուել, ինչպէս պ. Զմշկեանն է կամեցել,—դորա վերայ ես չեմ զարմանում. այո, անբնական չէ Նունէի վարմունքը. բայց ա ն բ ն ա կ ա ն չէր լինի նաև, եթէ նա արհամարհէր Ազիզեանցի մօրը ի սէր երիտասարդ Ազիզեանցի։ Եւ Նունէն, երկու չարիքներից ընտրելով փոքրագոյնը և հետևելով իւր սրտի թելադրութեան, նոյնքան և աւելի մեծ իրաւունքով կարող էր բացականչել՝ «Թող փարատուի խաւարը, ժամանակը կ՚անէ իւր անելիքը»։

Բայց ոչ. պ. Զմշկեանը քաջութիւն չի ունեցել այդպէս վարուելու. նա դժուարացել է Նունէին դուրս բերել ոչ որպէս մի բացասական հերոսուհի, այլ որպէս ներգործական հերոսուհի, որովհետև «Վարժուհու» մէջ Նունէն մի բացասական հերոսուհի է։ Նա դժբաղդացնում է իրան, դժբաղդացնում է երիտասարդ Ազիզեանցին—առանց մի գաղափար փրկելու։ Ես շատ լաւ եմ հասկանում, որ կարելի էր սէրը խեղդելով հերոսանալ. ես միանգամայն թոյլ եմ տալիս, որ կարելի է սէրը թաղցնել—մի այլ սէր ազատելու համար և կամ յանուն մի որ և է առաքինութեան. բայց ես ոչինչ առաքինութիւն չեմ տեսնում, խանգարելով մի ամուսնութիւն՝ հասարակական խաւարը աւելի թանձրացնելու հետևանքով, խանգարել մի ամուսնութիւն՝ պատւական երիտասարդի և այն էլ մի սիրած մարդու՝ ճաշհի մէջը գցելու համար։

Եւ վերջապէս ինչու անպատճառ ենթադրել, որ, եթէ Ազիզեանցը պսակուէր Նունէի հետ, դոցա ընտանիքում պէտք է մեծ փոթորիկ լինէր, մայր ու որդի բաժանուէին և այլն։ Ես կարծում եմ, որ Ազիզեանցի մայրը կը խօսէր, կը փնթփնթար ու վերջը... կը լռէր, կը հաշտուէր կատարուած իրողութեան հետ, նամանաւանդ որ Ազիզեանցի արածը մի հրէշաւոր բան չէր լինի հասարակութեան աչքում, գոնէ այժմեան Թիֆլիսի հասարակութեան, որը տեսել է ամուսնութիւններ այլապէս ռոմանտիքական, քան

կը լինէր Ազիզեանցի արածը։ Նունէն, որպէս Ազիզեանցի կին, կը դանէր լաւ չրջան նաև այժմեան Թիֆլիսում. նա մինչև անգամ կարող էր իւր կապը չը կտրել ուսումնարանական գործի հետ։

Ահա, ուրեմն, «Վարժուհու» գլխաւոր պակասութիւնը՝ սէրը զոհւում է առանց յարգելի կամ անընդդիմադրելի պատճառի։ Զոհւում է սէրը՝ առանց հետք թողնելու, մինչդեռ կոմեդիայի բնաորոշ նպատակն է՝ ցոյց տալ, թէ ինչպէս է ազատւում սէրը բոլոր խոչնդոտների միջից։ Երբ սէրը չը պէտք է ազատուի, այլ պէտք է խեղդուի, զոհուի, դա արդէն կոմեդիա չէ, այլ ողբերգ։ Սէրը այն զգացմունքներից է, առանց որի ամուսնութիւնը կը դադարի ամուսնութիւն լինելուց, իսկ առանց փոխադարձ սիրոյ վերայ հիմնւած ամուսնութիւնների—ընտանիքները կը փչանան, դոցա հետ նաև ինքը հասարակութիւնը։ Փրկել հասարակութիւնը բարոյական անկումից կարելի է ուրեմն միայն՝ երբ դուք կը փրկէք սէրը։ Ահա թէ ինչու ամուսնական սէրը, առողջ, տնողական սէրը, որը կարող է ընտանիքի համար տաքացնող կրակը դառնալ։ Թէ ինչու, ասում եմ, ամուսնական սէրը կոմեդիայի գլխաւոր առարկան է, և թէ ինչու այդ սէրը ինքն ըստ ինքեան դառնում է մի նպատակ, որի առջև հասարակական նախապաշարմունքները ոչ չը պէտք է ունենան։ Սէրը հարկաւոր է փրկել յանուն հասարակութեան յառաջադիմութեան. այնպէս որ սէրը կարող է զոհւել միմիայն այն դէպքում, երբ նա պահանջում է վերացնելը մի այնպիսի կարգ ու կանոնի, առանց որի նոյն այդ հասարակութիւնը կարող է ապականւելու վտանգի ենթարկւել։ Օրինակի համար, եթէ մէկի սէրը ազատելու համար, հարկաւոր լինէր՝ ուղղակի ամուսնութիւնը վերացնել և ազատ սէր ընդունել և կամ բազմակնութիւն ներմուծել և այն։

Այսպիսով մենք տեսնում ենք, որ «Վարժուհու» գլխաւոր միտքը քննադատութեան չի դիմանում։ Եւ թող չ'ասեն ինձ, թէ հեղինակը ուզեցել է միմիայն կեանք նկարագրել և ոչ թէ տենդենցիա մտցնել իւր պիեսի մէջ։ Այդ առարկութեան ես ուղղակի կը պատասխանեմ.—կեանքը արդէն ինքն ըստ ինքեան նկարագրւում է, երբ հեղինակը մեզ ներկայացնում է Նունէի հոգեկան կռիւը Ազիզեանցի մոր Եփեմիայի դէմ. բայց թէ ինչ ելք է ստանում այդ կռիւը, այս թէ այն՝ դա արդէն կախւած է նորանից թէ ինչ է ուզում ասել հեղինակը։ Եւ ես ասում եմ, որ հէնց դորանումն է, որ կաղում է «Վարժուհին»։

Մի լաւ կոմեդիա լինելու և թատրոնական բեմերտուարի երկարամեայ սեպհականութիւն դարձնելու համար, այժմեան «Վարժուհին» պէտք է փոփոխութեան ենթարկել. և նա այն ժամանակ կը լինէր ոչ թէ երեք, այլ չորս կամ հինգ գործողութիւնով։

ԼՈՒՍԻՆԻ